ուած եղաւ դէպի Վրաստան դաղթել։ Վերջինս, որ Ախալքալաքը իր սեփականութիւնն էր համարում, որով ուրեմն՝ պարտք պիտի համարէր ընդունելու իր «հպատակ» դաղթականներին, յանձն առնելով նրանց խնամատարութիւնը, հանդէս բերաւ, ընդհակառակը, մի անօրինակ, դաժան վերաբերմունք նրանց հանդէպ։

Վրացական սոցիալ-դեմոկրատ կառավարութեան հրամանով՝ Ախալքալաքի բազմահազար հայութիւնը — ծերեր ու երիտասարդներ, այրեր ու կիներ, հիւանդ թէ առողջ, ամէնքը, ամէնքը — այն էլ՝ ձմրան էն դաժան, ցրտաշունչ ամիսներին — որպէս դառապեղի մէջ արգելափակուած պահուեցան Բակուրիանիի անտառապատ բարձունքներում, Ախալքալաքի դաւառին անմիջապէս կից վրացական այդ սահմանամերձ լեռնավայրում։ Թոյլ չտրուեցաւ եւ ո՛չ ոքի՝ իջնել սարերից վար, դէպի Գորիի եւ վրացական ուրիշ հովիտներ, ուր դոնէ կլիմայական պայմանները մեղմ լինելով՝ դաղթական բազմութիւններից այնչա՛փ զոհեր չպիտի խլուէին։

Կարծէք այդ քի՛չ էր։ «Հայրախնամ» մենշեւիկ կառավարութիւնը զլացաւ մինչեւ իսկ՝ բժշկական, պարէնական եւ այլ կարգի օգնութիւն հասցնել «իր» Ախալքալաքի դաղթականներին, թողնելով որ սառոյցի եւ ձիւների վրայ գիշերող «վրացական հպատակները» հարիւրներով եւ հազարներով զոհեր տան եւ եթէ չլինէր այդ ժամանակ Հայաստանի Հանրապետութեան կողմից (Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդի միջոցով) ախալքալաքցիներին հասցնուող օգնութիւնը ալիւրով, դեղօրայքով եւայլն, զոհերի թիւը անտարակոյս կրկնակի եւ եռակի պիտի լինէր։

Չէ կարելի ասել, ի հարկէ, թէ նման խրատական վերաբերմունքի պատճառը միջոցների չգոյութի՛ւնն էր Վրաստանի համար։ Բնա՛ւ։ Նա շատ, անհամեմատ աւելի՛ նպաստաւոր պայմաններում էր գտնուում, քան առանց ա՛յն էլ «դաղթականների երկիր» համարուած Հայաստանը։ Ռուս կառավարութեան եւ բանակի թողած ահագին պաշարները մեծ մասով Վրաստանում էին կենտրոնացած։ Վերջապէս նրա կռնակին չէր ծանրացած դաղթականական հոգսը, քանի որ Վրաստանը ամենավատթար օրերին անդամ դաղթականութիւն չունեցաւ դրեթէ։ Ուզում եմ ասել, որ նա նիւթական բոլո՛ր հնարաւորութիւնները ունէր եւ պարտաւոր էր՝ Ախալքալաքի դաղթականներին օգնութիւն հասցնելու։

Եթէ ո՛չ մարդասիրական տարրական դիտակցութիւնից, զէթ քաղաքական, ողջմտութիւնից դրդուած՝ պէ՛տք է որ վրաց կառավարութիւնը ձեռք մեկնէր կոտորուող ախալքալաքցիներին, ցոյց տալով, որ նրանց հետ է դժբախտութեան օրերին, որպէսզի զէթ դրանով երեսատեղ ունենար՝ պատեհ առթիւ «հիմնաւորելու» իր «վեհապետական իրաւունքը» Ախալքալաքի վրայ։ Եւ սակայն Ժորդանիայի կառավարութիւնը այդ էլ չարաւ. նա հանդէս չբերաւ ո՛չ տարրական մարդասիրութիւն, չասելու համար եղբայրասիրութիւն, ո՛չ էլ՝ պետական-քաղաքական հեռատեսութիւն։

Աւելին դեռ. նոյն այդ «ընկերվարական» կառավարութիւնը — կասկածե՞լ պէտք է մի-թէ — վարում էր այդ քաղաքականութիւնը «սեփական հպատակների» վերաբերմամբ՝ միանգամայն գիտակցաբար, սառը դատողութեամբ եւ թուաբանական հաշիւներ անելով։ Ի տես ա՛յն փաստի, որ Ախալքալաքի ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը հայերից է բաղկացած, որ՝ բնականաբար՝ նոյն այդ դաւառը Հայաստանին կցուելու օգտի՛ն պիտի արտայայտուէր եւ արտայայտո՛ւմ էլ էր, վրացի ազգայնամոլ վարիչները — ընկերվարական յորջորջուէին նրանք թէ ոչ, տարբերութիւն չէ՛ր մնացել արդէն նրանց մէջ — պատեհ առիթ էին համարում Ջաւախքի հայութեան ողբերգութիւնը Բակուրիանիի բարձունքներին, որ բնութեան առթած (մարդ-արարածների՛ ձեռքով) կոտորածը, «արիւն առնելը» ախալքալաքցիի երակից՝ նուազեցնէ՛ նրա բացարձակ եւ տոկոսական քանակը, նուազեցնելո՛ւ համար նաեւ՝ ազգային եւ քաղաքակա՛ն կշիռը Ախալքալաքի հարցը լուծելում։

Ուրիշ ուրիշ բացատրութիւն անկարելի՛ է տալ։

Նոյն այդ նպատակն էր հետապնդում, ինչպէս նաեւ ա՛ռհասարակ Հայաստանի կառավարութեան վրայ քաղաքական ճնշում գործ